2015 թվականին Շենգավիթ վարչական շրջանում հիմնանորոգվել է թվով 5 փողոց.

- Եղ.Թադևոսյան նրբանցք՝ 3220 քմ, մայթ՝ 800 քմ և եզրաքար՝ 300 գծմ,
- Մանթաշյան նրբանցք՝ 1200 քմ:

Իրականացվել են նաև ընթացիկ վերանորոգվող փողոցների, մայթերի, եզրաքարերի և բակերի ասֆալտապատման աշխատանքներ.

- փողոցներ՝ 40000 քմ,
- բակեր՝ 52000 քմ,
- մայթեր՝ 5500 քմ,
- եզրաքարեր՝ 4500 գծմ:



Մայթերի և պուրակների սալիկապատում.

- Իրականացվել են Կարմիր բլուրի տարածքում (Հ.Հովհաննիսյան փող. հարող տարածք)՝ 685 քմ,
- Ա. Կարապետյանի անվան այգում՝ 2983 քմ:

Հենապատերի կառուցում և վերանորոգում.

- Իրականացվել է Կարմիր բլուրի տարածքում, Բագրատունյաց փող. (Երևանյան լճից դեպի Ռուսական եկեղեցի հատվածը), Բագրատունյաց փող. (Շենգավիթ հնավայրի հարակից տարածք)՝ 115 քմ:

Ոռոգման ցանցի անցկացում, եղած ցանցի վերանորոգում.

- անցկացվել է նոր ոռոգման ցանց՝ 4533 գծմ,
- վերանորոգվել է 260 գծմ,
- փոխվել են փականներ,
- ներկվել են խողովակներ,
- շահագործման է հանձնվել 2 հատ խորքային պոմպակայան՝ Եղ.Թադևոսյան փող. հ.11 և Շիրակի փող. հ. 20,
- նոր պոմպակայան է կառուցվել Կարմիր բլուր հնավայրի հարակից տարածքում:

Կանաչ տարածքների ստեղծում.

- ստեղծվել են նոր կանաչ տարածքներ՝ 4420 քմ,
- տնկվել են շուրջ 131600 հատ ծաղկասածիլներ, մշտադալար թուաներ 83 հատ՝ Կոմիտասի անվ. պանթեոնի հարակից տարածքում, Ա. Կարապետյանի անվ. պուրակում, Կարմիր բլուր հնավայրին կից պուրակում,
- զարնանային և աշնանային ծառատունկերին տնկվել է 4600 ծառ,
- իրականացվել է ծառերի սանիտարական էտ՝ զարնանը 3000 ծառ, աշնանը՝ 1600 ծառ:

Կոմպոզիցիաներ են տեղադրվել.

- Կոմիտասի անվ. թանգարանին կից տարածքում՝ 1 հատ ջութակ և 1 հատ վին,
- Արշակունյաց - Բագրատունյաց խաչմերուկում՝ 2 հատ փոկ:

Շենքերի ֆասադների նորոգում (թափվող սալիկների տեղադրում), մաքրում.

- Իրականացվել է 2 շենքերի ֆասադների նորոգում:

Շքամուտքերի վերանորոգում.

- վերանորոգվել է բազմաբնակարան շենքերի թվով 60 շքամուտք, աշխատանքներն իրականացվել են մուտքերի բոլոր հարկաբաժիններում,
- տեղադրվել է 165 հատ մուտքի դուռ:

Տանիքների վերանորոգում (թեք, հարթ).

- վերանորոգվել է 7240 քմ ընդհանուր մակերեսով հարթ տանիք,
- 9000 քմ ընդհանուր մակերեսով թեք տանիք,
- հիմնանորոգվել է Ս.Տարոնցու հ. 3 շենքի 1000 քմ մակերեսով թեք տանիք,
- փոխվել և նորոգվել են 4800 գծմ անձրևատար խողովակներ:

Վթարային պատշգամբների ամրացում, նորոգում.

- Նորոգվել և ամրացվել է բազմաբնակարան շենքերի թվով 31 պատշգամբ:

Համագործակցություն համատիրությունների հետ.

- Մասիսի նրբ. 99/3 շ. բակում կառուցվել է 150 գծմ արտաքին լուսավորության ցանց և տեղադրվել է թվով 5 լուսատու:
- Փոխվել և վերանորոգվել է բազմաբնակարան շենքերի շուրջ 2400 գծմ ջրագիծ և կոյուղագծի ներքին ցանց:
- Տեղադրվել են 152 հատ նստարան, 22 հատ զրուցատաղավար և 154 աղբաման:
- Բակային տարածքներում և խաղահրապարակներում վերանորոգվել և տեղադրվել են եզրաքարեր, 35 բակերում նկարվել է 103 նկար (1460 քմ):

- Շահագործման է հանձնվել 6 բակային տարածք:
- Հիմնանորոգվել են Եղբայրության փողոցի հ. 22 և 24 շենքերի՝ փողոցի երկայնքով հարակից տարածքի, Ս. Տարոնցու նրբ. 14 և 16 շենքերի միացյալ, Գ. Նժդեհի 30/1 և 30/2 շենքերի, Մանանդյան 9 և 9ա շենքերի, Նիզամու 13, Մանանդյան 14, Եղբայրության 3 և 3ա շենքերի, Կարմիր Բլուր 5 հասցեի հարակից բակային տարածքները:

Խաղահրապարակների ստեղծում

- Ստեղծվել է 8 խաղահրապարակ:

Մինի ֆուտբոլի դաշտերի տեղադրում

Շահագործման է հանձնվել թվով 1 մինի ֆուտբոլի դաշտ

- Եղ. Թաղևոսյան փողոցի հ. 22 շենքի բակում:



Ջրամատակարարման համակարգի վերանորոգում «ՀՋ ԾԻԳ» –ի ծրագրերով իրականացվել են՝

- Նորագավիթ թաղամասի 1-ից 13 փ. նոր ջրագծերի կառուցում,
- Ս. Տարոնցու նրբ. հհ. 2-ից մինչև 10-րդ շենքերի հատվածում նոր կոյուղագծի կառուցում,
- «Աէրացիա» կեղտաջրերի մաքրման կայանի վերակառուցման աշխատանքներ:

«Երևան-Ջուր» ՓԲԸ 2015թ. ծրագրով ավարտվել են՝

- Շարուրի փողոցի հ. 18 շենքի մոտ պոմպակայանի վերակառուցման և հարակից շենքերի ջրագծերի փոխարինման աշխատանքները,
- ավարտվել են Ն. Շենգավիթ 9-րդ և սկսվել 8-րդ փողոցների հին ջրագծերը նորով փոխարինելու աշխատանքները,
- հ. 5 մշակույթի տան, հ. 139 մանկապարտեզի, Շախմատի դպրոցի և հհ. 16 և 32 գրադարանների, Ա. Տիգրանյանի անվան երաժշտական դպրոցի հիմնանորոգման աշխատանքները:

Գազամատակարարում.

- Նոր Խարբերդ թաղամասում Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի համատեղ ջանքերով կառուցվել է 2000 գծմ գազատար խողովակաշար, գազաֆիկացվել է 74 առանձնատուն և 195 բնակարան: Ն. Չարբախ թաղամասում «Գազպրոմ-Արմենիա» Երևանի ԳԳՄ-ի կողմից կառուցվել է 3600 գծմ գազատար խողովակ:

Վարչական շրջանի տարածքում ներկվել է 14933 գծմ գազատարի խողովակաշար:

Էլեկտրաէներգիայի մատակարարման համակարգի նորոգում.

Անցկացվել է 5690 գծմ էլեկտրամատակարարման մալուխ, տեղադրվել է 195 և ուղղվել 20 հենասյուն:

Արտաքին լուսավորության ցանցի անցկացում.

Թվով 13 փողոցներում կատարվել է արտաքին լուսավորության ցանցի անցկացում:

Տեղադրվել է թվով 293 լուսատու, և անց է կացվել 11395 գծմ արտաքին լուսավորման ցանց:



Թեքահարթակների կառուցում

Կառուցվել է թվով 14 թեքահարթակ:

Այցելություն զորամասեր

Կազմակերպվել է ՀՀ և ԼՂՀ սահմանամերձ գոտիներում ծառայող երևանաբնակ 264 ժամկետային զինծառայողների 280 ծնողների այցելություն զորամասեր:

Համագործակցություն ՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների հետ

Տարաբնույթ սոցիալական ծրագրեր են իրականացվել «Շենգավիթ» բարեգործական հիմնադրամի, «Շենգավիթ» համատիրությունների միություն» ՀԿ, «Ամքոր» ՀԿ, «Քաունթերփարթ Ինթերնեշնլ» ՀՄՕՕԾ-ի հայաստանյան գրասենյակի, «Առդա» ՀԿ, «Առաքելություն Հայաստան» ՀԿ, «Սատար» ՀԿ, «Փրկություն» ՀԿ, «Էմմանուել» հատուկ կարիքներով երեխաների ՀԿ, «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ, «ՀՀ խուլերի միավորում» ՀԿ, «Հանս Քրիստիան Կոֆոեդ» և «Նյու Լայֆ» բարեգործական հիմնադրամների, «Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միություն» ՀԿ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոնի, Վանաձորի «Հույսի տուն» հանգստյան տան, «Փեն Բոքս» ՍՊԸ, «Տուկասա» ՍՊԸ, «Էդկա» ՍՊԸ և այլ անհատ բարերարների հետ:

- 15 դպրոցահասակ երեխաներ 15-օրյա հանգստի են մեկնել Դիլիջանի մանկական առողջարան:
- Սոցիալապես անապահով ընտանիքներից 120 երեխա 20-օրյա հանգստի է մեկնել Ծաղկաձորի «Աղբյուր» և 15 երեխա՝ Հանքավանի «Հեքիաթների կիրճ» ճամբարներ:
- Սիրիահայ 54 ընտանիքի տրամադրվել են սննդի օգնության փաթեթներ, անկողնային պարագաներ:

Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին, երեխաներին /մանկապարտեզներում, դպրոցներում/

- 500 ընտանիքի ցուցաբերվել է դրամական օգնություն,
- 2300 ընտանիքի տրամադրվել են սննդի փաթեթներ, հագուստ, 40 ընտանիք ստացել է վառելափայտ,
- Սգո արարողության համար աջակցություն է ստացել 95 ընտանիք,
- 151 շահառու օգտվում է բարեգործական ճաշարանից,
- 21 մանկապարտեզի ավագ խմբերի բոլոր 1230 երեխաները որպես նվեր սատացել են դպրոցական պայուսակ և գրենական պիտույքներ,
- ամանորյա տոներին ընդառաջ՝ սոցիալապես անապահով շուրջ 3000 ընտանիքի տրամադրվել են ամանորյա սննդի փաթեթներ, իսկ 5000 երեխաների՝ քաղցրավենիքի փաթեթներ,
- տրամադրվել են հիգիենայի պարագաներ 980 սոցիալապես անապահով ընտանիքների,
- աջակցության նպատակով այցելություններ են կազմակերպվել ՀՀ Սյունիքի մարզի շուրջ 10 և ԼՂՀ Մարտակերտի մարզի՝ 6 գյուղեր, ինչպես նաև՝ ԼՂՀ Մարտակերտ քաղաք:

«Էրեբունի-Երևան 2797» տոնակատարության սոցիալական բաղադրիչի շրջանակում 276 ընտանիքի հատկացվել է անհրաժեշտ կենցաղային տեխնիկա:

Նախադպրոցական հիմնարկների վերանորոգում, հիմնանորոգում

Նորոգվել է թվով 3 մանկապարտեզ:

Նախադպրոցական հիմնարկների համար գույքի ձեռքբերում

Նոր գույքի համալրման ծրագրով տրամադրվել է 21 խոհանոցի պահարան՝ դարակաշարերով, 21 սննդի մշակման սեղան, 17 խմորի մշակման սեղան, 21 պատրաստի սննդի բաշխման սեղան, 7 երկհարկանի մահճակալ, 16 մանկական զգեստապահարան, 19 սառնարան, 19 դարակաշարերով պահարան՝ հացի կամ այլ սննդամթերքի պահպանման համար:

Անվճար հիմունքով թվով 21 մանկապարտեզ հաճախող երեխաների ցուցակային թիվը կազմում է 3056:

Միջոցառումների կազմակերպում

Պարբերաբար կազմակեպվում են միջոցառումներ՝ նվիրված պետական և ազգային տոներին, ինչպես նաև՝ տարաբնույթ թեմատիկ հանդեսներ, խաղեր և մրցույթներ:

Մշակութային կենտրոնների /երաժշտական, արվեստի, մշակույթի դպրոցներ, գրադարաններ/ վերանորոգում, հիմնանորոգում.

- հիմնանորոգվել է հ. 32 գրադարանը,
- վերանորոգվել է հ.18 գրադրանը,
- թիվ 5 մշակույթի կենտրոնը:

Մշակութային կենտրոններ հաճախող երեխաների ցուցակային թիվը.

- Ա. Տիգրանյանի անվան երաժշտական դպրոց՝ 875 երեխա,
- Ստ. Զրբաշյանի անվան երաժշտական դպրոց՝ 418 երեխա,
- Պատանեկության ստեղծագործական կենտրոն՝ 556 երեխա,
- Տեխնիկական ստեղծագործական կենտրոն՝ 300 երեխա,
- Թիվ 5 մշակույթի կենտրոն՝ 387 երեխա:

Մշակութային միջոցառումների կազմակերպում.

- ՀՀ անկախության օրվա կապակցությամբ Ա. Տիգրանյանի անվ. երաժշտական դպրոցի դահլիճում համերգային ծրագրով հանդես է եկել Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորության 6-րդ գնդի փողային նվագախումբը:

- Կոմիտասի ծննդյան 146-ամյակի առիթով Ա. Տիգրանյանի անվան երաժշտական դպրոցի դահլիճում միասնական համերգային ծրագրով հանդես են եկել Վիրահայոց թեմի Բաթումիի Ալ. Մանթաշովի անվան կրթամշակութային և երիտասարդական կենտրոնի «Աղբյուր» երգչախումբը և երաժշտական դպրոցի պատանի երաժիշտները:
- Պարբերաբար կազմակեպվում են միջոցառումներ՝ նվիրված պետական, ազգային, տաղավար տոներին, ինչպես նաև՝ տարաբնույթ թեմատիկ միջոցառումներ, ներկայացումներ:

Մարզադպրոցների ջեռուցման ծրագիր

Երևանի ակրոբատիկայի և գեղարվեստական մարմնամարզության մանկապատանեկան մարզադպրոցում ավարտվել է ջեռուցման ծրագիրը:

Սպորտդպրոց հաճախող երեխաների ցուցակային թիվը 775 է:

•Երևանի մենապայքարային ու խաղային մարզաձևերի մանկապատանեկան համալիր մարզադպրոց՝ 378 երեխա,

•Երևանի ակրոբատիկայի և գեղարվեստական մարմնամարզության մանկապատանեկան մարզադպրոց՝ 236 երեխա,

• Երևանի սեղանի թենիսի և թենիսի մանկապատանեկան մարզադպրոց՝ 161 երեխա:

Սպորտային միջոցառումների կազմակերպում

•Վարչական շրջանի թիմերը /սեղանի թենիսի, բասկետբոլի, շախմատի, լողի, սանդա-ուշուի/ մշտապես ակտիվ մասնակցություն են ցուցաբերում Երևան քաղաքում կազմակերպվող բոլոր մարզական միջոցառումներին, այդ թվում՝ ՀՀ բանակի 23-ամյակին, ՀՀ անկախության 24-րդ տարեդարձին, Ուսուցչի օրվան, Մայրության և գեղեցկության, Գիտելիքի և դպրության օրերին նվիրված միջոցառումներին:

Առողջապահության ոլորտ

Առողջապահական հիմնարկների վերանորոգում, հիմնանորոգում

Վերանորոգման աշխատանքներ են ընթանում «Կարմիր Բլուր» և հ.13 պոլիկլինիկաներում:

Պետպատվերի շրջանակում բուժօգնության ցուցաբերում, առողջարանային ուղեգրերի տրամադրում

Բուժօգնություն ստանալու նպատակով միջնորդագիր է տրամադրվել վարչական շրջանի 7 բնակչի:

Ակցիաների շրջանակում անվճար բուժզննման իրականացում

«Ձեզ համար, կանայք» միամսյակի շրջանակում անվճար բուժզննում է անցել 1755 կին,
«Երևանյան ամառ» ծրագրի շրջանակում՝ շուրջ 270 քաղաքացի:

Այց արտերկիր, համագործակցություն, ձեռքբերումներ

- Մայիս և սեպտեմբեր ամսին Երևանի քաղաքապետի հանձնարարությամբ վարչական շրջանի ղեկավարի գլխավորած պատվիրակությունն այցելել է ՌԴ Ստավրոպոլ քաղաք՝ մասնակցելու հաղթանակի և քաղաքի տոներին:
- Հուլիս ամսին Երևանի քաղաքապետի հանձնարարությամբ վարչական շրջանի ղեկավարի գլխավորած պատվիրակությունն այցելել է ՌԴ Սոչի քաղաք: Շենգավիթ վարչական շրջանի և Սոչի քաղաքի միջև բազմակողմ համագործակցության նպատակով վավերացվել է հուշագիր:

- Շենգավիթ վարչական շրջանի և ԼՂՀ Մարտակերտի վարչակազմի միջև բազմակողմ համագործակցության նպատակով 2014թ. վավերացվել էր հուշագիր, որի շրջանակում պարբերաբար այցելություններ են կատարվում Մարտակերտի շրջանի մի շարք համայնքներ՝ տնտեսության, կրթական, մշակութային ոլորտներում փորձի փոխանակման նպատակով:
- Շենգավիթ վարչական շրջանի և ՀՀ Սյունիքի, Արմավիրի մարզերի միջև վավերացված հուշագրի շրջանակում պարբերաբար այցելություններ են կատարվում մարզերի մի շարք համայնքներ:

Պաշտոնատար անձանց ընդունում, համագործակցություն, ձեռքբերումներ

- «Էրեբունի-Երևան 2797» տոնակատարության շրջանակում վարչական շրջանն ընդունել է ՌԴ Ստավրոպոլ քաղաքի, ինչպես նաև ԼՂՀ Մարտակերտի, ՀՀ Սյունիքի մարզի մի շարք համայնքների ղեկավարների պատվիրակություններ: